

«Նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը էլեկտրոնային եղանակով իրականացնելու դեպքերը և կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2025 թվականի N _____ -Ն

**ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 3.2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը էլեկտրոնային եղանակով իրականացնելու դեպքերը և կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից:

Հավելված

ՀՀ կառավարության 2025 թվականի

_____ -ի N ____ -Ն որոշման

**ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ
ԿԱՐԳԸ**

1. Սույն հավելվածով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 3.2-րդ մասին համապատասխան՝ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը էլեկտրոնային եղանակով իրականացնելու դեպքերի և կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն հավելվածով սահմանված դեպքերում՝ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունը ապրանքների շրջանառության մասնակիցները փոխանցում են էլեկտրոնային եղանակով՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 10-ի N312-Լ որոշմանը համապատասխան՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման ազգային օպերատորի մշակած և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հետ համաձայնեցված բջջային հավելվածով (այսուհետ՝ Հավելված),

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի N1418-Ն որոշմանը համապատասխան՝ հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանառության նկատմամբ մոնիտորինգի տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով:

3. Հավելվածը գրանցելու և գրանցումից հանելու համար դիմումները ներկայացվում են հարկային մարմնի հաշվետվություններ ներկայացնելու համակարգի (<https://file-online.taxservice.am>) միջոցով:

4. Նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկությունը Հավելվածի միջոցով հարկային մարմնի միասնական շտեմարան փոխանցվում է մինչև դրոշմավորված ապրանքի օտարելը կամ օգտագործելը/սպառելը կամ շրջանառությունից հանելը՝ հետևյալ դեպքերում.

1) նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքը այլ ապրանքի (այդ թվում՝ կիսաֆաբրիկատի) արտադրության (պատրաստման) մեջ կամ սեփական կարիքների համար օգտագործում: Սույն ենթակետում նշված դեպքում, տեղեկությունը փոխանցում է դրոշմավորված ապրանքը այլ

ապրանքի (այդ թվում՝ կիսաֆաբրիկատի) արտադրության (պատրաստման) մեջ կամ սեփական կարիքների համար օգտագործողը,

2) նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի (բացառությամբ խմբային փաթեթավորման և ապրանքի հավաքածուի) մասնակի օտարում: Սույն ենթակետում նշված դեպքում, տեղեկությունը փոխանցում է դրոշմավորված ապրանքը մասնակի օտարողը,

3) ծառայության մատուցման ընթացքում նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի օգտագործում, եթե դրա արժեքը ներառվում է ծառայության արժեքի մեջ: Սույն ենթակետում նշված դեպքում, տեղեկությունը փոխանցում է ծառայություն մատուցողը,

4) սույն կետի 1-3-րդ ենթակետերում չնշված այլ դեպքերում, երբ առկա չէ հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հսկիչ դրամարկղային մեքենայի կամ դրան միացված ծրագրային կամ տեխնիկական միջոցներով նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների օտարման կամ օտարման պահին ապրանքի դիմաց վճարման փաստ: Սույն կետում նշված դեպքերում, տեղեկությունը փոխանցում է դրոշմավորված ապրանքը շրջանառությունից հանողը:

5. Սույն կարգի 4-րդ կետում նշված դեպքերում շրջանառությունից հանված նույնականացման միջոցի վերադարձ շրջանառության մեջ կարող է իրականացվել Հավելվածի միջոցով, եթե վերադարձվող ապրանքը, որի վրա առկա է նույնականացման միջոցը, չի օգտագործվել, պահպանված են դրա ապրանքատեսքը և սպառողական հատկանիշները:

6. Նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու՝ շահագործումից հանելու դեպքերում այդ նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունը փոխանցվում է Համակարգ՝ մինչև դրոշմավորված ապրանքի նույնականացման միջոցը շրջանառությունից հանելը՝ շահագործումից հանելը՝ հետևյալ դեպքերում.

1) նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի դուրս գրում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N1261-Ն որոշմամբ սահմանված կարգով փաստաթղթավորված կորուստ համարվելու դեպքում: Սույն ենթակետում նշված դեպքում, տեղեկությունը փոխանցում է դրոշմավորված ապրանքը դուրս գրողը,

2) նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի բռնագրավում կամ հօգուտ պետության հրաժարում: Սույն ենթակետում նշված դեպքում, տեղեկությունը փոխանցում է այն անձը, որից բռնագրավվել է դրոշմավորված ապրանքը կամ որը հրաժարվել է դրոշմավորված ապրանքից հօգուտ պետության,

3) նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի արտահանում: Սույն ենթակետում նշված դեպքում, տեղեկությունը փոխանցում է դրոշմավորված

ապրանքը Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանողը,

4) նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի՝ փորձաքննության կամ լաբորատոր փորձարկման նպատակով դուրսգրում:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված դեպքերում շրջանառությունից հանված նույնականացման միջոցի վերադարձ շրջանառության մեջ կարող է իրականացվել Համակարգի միջոցով, եթե վերադարձվող ապրանքը, որի վրա առկա է նույնականացման միջոցը, չի օգտագործվել, պահպանված են դրա ապրանքատեսքը և սպառողական հատկանիշները:

8. Սույն կարգի 4-րդ և 6-րդ կետերում նշված դեպքերում նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների դրոշմավորման ծածկագրերին տրվում է «Շրջանառությունից հանված՝ շահագործումից հանված» կարգավիճակ: